

## **Արձանագրություն թիվ 01**

*Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական  
ինստիտուտ ՊՈԱԿ-ի մանկավարժության ֆակուլտետի  
28.08. 2014թ. խորհրդի նիստի*

Խորհրդի 17 անդամներից ներկա էին 16-ը՝ Ռ. Մարդոյանը /մանկ.ֆակ. դեկան, խորհրդի նախագահ/, Լ. Գևորգյանը /քարտուղար/, Լ. Հակոբյանը, Լ. Ղուկասյանը, Լ. Միքաելյանը, Օ. Պողոսյանը, Լ. Աթանեսյանը, Ց. Կոչոտյանը, Կ. Եղոյանը, Ա.Կիրակոսյանը, Ա. Տոնոյանը, Լ. Միքաելյանը, Հ. Այվազյանը, Ս. Մարգարյանը, Հ. Սուքիասյանը, Մ. Վարդերեսյանը:

Նիստը նախագահում էր դեկան, դոկտոր Ռ. Մարդոյանը:

### **Օրակարգում –**

1. Մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի հաշվետվությունը:
2. Կերպարվեստի, երաժշտության ու նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի հաշվետվությունը:

**1.Լսեցին** – Կերպարվեստի, երաժշտության ու նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ Լ. Աթանեսյանը, որը ներկայացրեց 2013-2014 ուստարում ամբիոնի կատարած աշխատանքները, պրոֆեսորադասախոսական անձնակազմը՝ ըստ տարիքային խմբերի, գենդերային բաշխվածության, ըստ գիտական աստիճանների և կոչումների, ներկայացվեց ամբիոնի ուսումնական և ուսումնամեթոդական գործունեությունը, ամբիոնում առկա էլեկտրոնային դասախոսությունները, կուրսային և դիպլոմային աշխատանքները, մանկավարժական պրակտիկան, ուսանողների մասնակցությունը ՈԻԳԸ ի սեկցիաներին, ուսումնական գործընթացի ապահովման նյութատեխնիկական բազան, հնչեցին նաև առաջարկություններ՝ ամբիոնի աշխատանքների բարելավման ակնկալիքներով:

**Արտահայտվեցին** – Ռ. Մարդոյանը, որը նշեց ամբիոնի գործունեության մեջ առկա ձեռքբերումները, որոշակի բացթողումները, բավական բարձր գնահատեց ամբիոնի կատարած ուսումնամեթոդական և գիտական աշխատանքները, անդրադարձ կատարեց նաև ամբիոնի համար կադրերի պատրաստման խնդրին:

**2.Լսեցին** – Մանկավարժության և սոցիալական աշխատանքի ամբիոնի վարիչ Լ. Ղուկասյանը ներկայացրած հաշվետվությունը ամբիոնի 2013-2014 ուստարվա աշխատանքների վերաբերյալ, որը ներկայացրեց, որ 2013-2014 ուստարում ամբիոնը կատարել է իր պարտականությունները և՛ ուսումնական և՛ գիտական աշխատանքների

զծով՝ ցուցաբերելով անհրաժեշտ աշխատանքային և կատարողական կարգապահություն: Ամբիոնը 2013-2014 ուստարվա առաջին և երկրորդ կիսամյակներում լրիվությամբ իրականացրել է համապատասխան ուսումնական պլաններից և առարկայական ծրագրերից բխող բոլոր աշխատանքները, դրանք համապատասխան փաստաթղթերի տեսքով ներկայացվել են ուսումնամեթոդական վարչություն. դասաբաշխումներ, անհատական կատարողական պլաններ, հաշվետվություններ և այլն: Ներկայացվեց նաև ամբիոնի պրոֆեսորադասախոսական անձնակազմը՝ ըստ գիտական աստիճանների ու կոչումների, գենդերային բաշխվածության, տարիքի,

**Արտահայտվեցին** - Կ. Սահակյանը, Լ. Աթանեսյանը, Լ. Ղուկասյանը, Կ. Եղոյանը, Մ. Վարդերեսյանը, որոնք նշեցին Ա. Պապոյանի՝ գիտամանկավարժական աշխատանքով զբաղվելու բարձր մակարդակի, արվեստագետին, գիտնականին բնորոշ արժանիքների, մարդկային որակների, մանկավարժական աշխատանքի հարուստ փորձի, բարձր ինտելեկտի և ուսանողին օգնելու պատրաստակամության մասին:

**Որոշեցին** – Երաշխավորել և բուհի գիտխորհրդին ներկայացնել Ա. Պապոյանի՝ դոցենտի կոչում ստանալու հարցը:

*Նիստի նախագահ՝ մանկ. ֆակ. դեկան՝ /Ռ. Մարդոյան/  
Քարտուղար՝ /Լ. Գևորգյան/*